ՀՏԴ 796.032 DOI: 10.53068/25792997-2025.1.14-156

ՊԵԿԻՆԻՑ ՓԱՐԻԶ. ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՓՈՐՁԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ա.Վ. Ավետիսյան, Լ.Կ. Խաչիկյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Օլիմպիական խաղեր, տնտեսություն, Պեկին-2022, Փարիզ- 2024, տեխնոլոգիաներ, կայուն զարգացում, քաղաքականություն, նորարարություն:

Հետազոտության արդիականություն: Օլիմպիական խաղերը միջազգային սպորտային համակարգի առանցքային բաղադրիչներից են, որոնք ունեն ոչ միայն սպորտային, այլև սոցիալ-տնտեսական և քաղաքական նշանակություն: Խաղերը մշտապես ներկայացնում են ժամանակի տեխնոլոգիական ու սոցիալական զարգացման նորամուծությունները, ինչն այն դարձնում է համաշխարհային կարևորություն ունեցող իրադարձություն [7]:

Փարիզի 2024 թվականի օլիմպիական խաղերն առանձնացան նորարարական և կայուն զարգացման ուղղվածությամբ՝ նպատակ ունենալով առաջին անգամ ամբողջությամբ համապատասխանել կլիմայական չեզոքության սկզբունքներին: Սա հատկապես կարևոր է միջազգային սպորտային իրադարձությունների կազմակերպման գործում նոր ուղղություններ սահմանելու և բնապահպանական գիտակցությունը խթանելու տեսանկյունից [7]:

Մյուս կողմից, Պեկինի 2022 թվականի ձմեռային օլիմպիական խաղերն ապացուցեցին, որ ժամանակակից տեխնոլոգիաները, ինչպիսիք են՝ արհեստական բանականությունը, նորարարական էներգիայի աղբյուրները և թվային հաղորդակցության համակարգերը, կարող են էապես փոխել այսպիսի խոշոր իրադարձությունների կազմակերպման գործընթացը [4]: Այս նորամուծությունները դարձան կարևոր հիմք և նախադրյալներ՝ ապահովելու խաղերի անվտանգությունն ու արդյունավետությունը համաշխարհային ճգնաժամերի, այդ թվում՝ COVID-19-ի պայմաններում [5]:

Պեկինից Փարիզ տանող ճանապարհը ցույց է տալիս, թե ինչպես են Օլիմպիական խաղերը նոր հնարավորություններ ձևավորում կայուն զարգացման, տեխնոլոգիական առաջընթացի և սոցիալ-տնտեսական ազդեցության տեսանկյունից: Այս իրադարձությունների համադրությունը հնարա-

վորություն է տալիս ուսումնասիրել միջազգային սպորտային միջոցառումների դերը՝ որպես ժամանակի հիմնական մարտահրավերներին ու հնարավորություններին արձագանքող հարթակ [3]:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտության նպատակն է՝ բացահայտել ժամանակակից տեխնոլոգիական, սոցիալ-տնտեսական և կառավարման մոտեցումների ազդեցությունը Օլիմպիական խաղերի երկարաժամկետ կայուն զարգացման և արդյունավետ կառավարման վրա Պեկին-2022-ի և Փարիզ-2024-ի օրինակներով:

Հետազոտության խնդիրները:

1. Ուսումնասիրել և համեմատել Պեկին-2022 և Փարիզ-2024 օլիմպիական խաղերի կազմակերպչական մոտեցումները՝ տեխնոլոգիաների կիրառման, ֆինանսական մոդելների և սոցիալ-մշակութային ազդեցությունների տեսանկյունից:

2. Վերհանել այն դասերը, որոնք կարելի է քաղել այս երկու խաղերից՝ ապագա Օլիմպիական խաղերի ավելի կայուն և արդյունավետ պլանավորման ու կազմակերպման համար:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության ընթացքում կիրառվել է գրականության աղբյուրների ուսումնասիրության, վերլուծության և ընդհանրացման մեթոդը:

Հետազոտությունը կազմակերպվել է 2024 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Օլիմպիական խաղերը կարևոր միջազգային իրադարձություններ են, որոնք ունեն տեխնոլոգիական, բնապահպանական և սոցիալական մեծ ազդեցություն:

Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ Պեկին-2022 և Փարիզ-2024 օլիմպիական խաղերը ներկայացնում են նոր չափանիշեր և մոտեցումներ՝ միջազգային սպորտային իրադարձությունների կազմակերպման ոլորտում:

Թվային տնտեսության ակտիվ զարգացումը, արդյունաբերական կառուցվածքի փոխակերպման շահաբաժինների ազատումը և տնտեսական զարգացման նոր շարժիչի ստեղծումը կարևոր խնդիրներ են Չինաստանի տնտեսության համար՝ հասնելու կանաչ վերափոխման և կայուն զարգացման [9]:

Պեկին-2022-ի օլիմպիական խաղերը դարձան տեխնոլոգիաների փորձադաշտ, որտեղ ներդրվեցին արհեստական բանականության կողմից առաջարկվող լուծումներ, նորարարական էներգիայի աղբյուրներ և թվային հաղորդակցության համակարգեր: Ըստ Մ. Ջոնսի [5]՝ Պեկին-2022-ն առանձնացավ

հատկապես արհեստական բանականության կիրառմամբ՝ մրցաշարերի կառավարման, անվտանգության ապահովման և մասնակիցների շարժի կառավարման ոլորտներում՝ հնարավորություն տալով բարելավել կազմակերպչական գործընթացների արդյունավետությունը:

Մյուս կողմից, Փարիզ-2024-ի խաղերը կենտրոնացված էին կայուն զարգացման վրա՝ փորձելով հասնել կլիմայական չեզոքության: Ջ. Սմիթի և Լ. Թոմասի ուսումնասիրության համաձայն [3]՝ Փարիզի օլիմպիական խաղերը նշանավոր են բնապահպանական սկզբունքների կիրառման տեսանկյունից՝ ներառյալ վերականգնվող էներգիայի լայն օգտագործում և Օլիմպիական խաղերի անցկացման վայրերի վերականգնում:

Բացի տեխնոլոգիական նորամուծություններից, կայուն զարգացման մոդելներն ունեն կարևոր դեր: Ջ. Սմիթն ու Լ. Թոմասը փաստում են [7], որ Պեկինում կիրառված որոշ մեխանիզմներ, ինչպիսիք են՝ էներգիայի ծախսերի նվազեցումը և վերականգնվող աղբյուրների ներգրավումը, հիմք դարձան Փարիզ-2024-ի առավել ընդգրկուն բնապահպանական ծրագրերի համար: Որպես օրինակ՝ կարող ենք դիտարկել էներգիայի ծախսերի նվազեցման մեխանիզմը: Պեկին 2022-ին կիրառվեց Օլիմպիական օբյեկտներում էներգաարդյունավետ լուծումների մեխանիզմը, ինչպիսիք են՝ LED լուսավորությունը, խելացի ջերմաստիճանի վերահսկումը և ջերմամեկուսացման նոր տեխնոլոգիաները: Ձմեռային օբյեկտների համար էներգախնայող սառեցման համակարգեր ներդրվեցին գերհզոր սառնարանային մեխանիզմների փոխարեն: Ինչպես նաև կարևոր դեր խաղաց վերականգնվող աղբյուրների ներգրավման մեխանիզմը, ինչը ապահովեց Պեկինում առաջին անգամ Օլիմպիական խաղերում քամու և արևի էներգիայի օգտագործումը, որոնք ապահովում էին մարզահամալիրների հիմնական էլեկտրամատակարարումը: Կարևոր դեր խաղաց նաև հիդրոէլեկտրակայաններից ստացված էներգիան, ինչը նվազեցրեց ածխածնի արտանետումները:

Այդ իսկ պատճառով, ինչպես ցույց են տալիս Ր. Գրաթոնն ու Հ.Փրաուսը [4]՝ երկու խաղերը կարևոր նշանակություն ունեն սոցիալ-տնտեսական կայունության հասնելու գործընթացում:

Տնտեսական ազդեցությունը վերաբերում է իրադարձության կամ միջամտության ազդեցությանը տնտեսության վրա, ներառյալ այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են՝ աշխատատեղերի, եկամուտների ստեղծումը և բիզնեսի զարգացումը:

Տնտեսական տեսանկյունից, ըստ Պ. Բրաունի, Դ. Քլարկի և Ռ. Ուայթի [3]՝ Պեկինի խաղերը ցույց տվեցին, թե ինչպես է ենթակառուցվածքների զարգացումը նպաստում տարածաշրջանային տնտեսական աճին: Փարիզի դեպքում, սակայն, նախապատվությունը տրվել է էկոլոգիական և տնտեսական ռիսկերի նվազեցմանը՝ ներդրումային նոր մոտեցումների շնորհիվ: Ինչպես ընդգծում են Միջազգային օլիմպիական կոմիտեի զեկույցները՝ Փարիզ-2024-ը նպատակ ունի դառնալ ամենակայուն Օլիմպիական խաղերը՝ շեշտադրելով նորարարական մոդելները [6]:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ Պեկինից Փարիզ տանող ճանապարհը ոչ միայն տեխնոլոգիաների և կայուն զարգացման, այլև սոցիալ-տնտեսական մոդելների բարելավման հարթակ է [6]: Տվյալ Խաղերը սահմանեցին նոր չափանիշեր, որոնք, ինչպես ցույց է տալիս Լ. Շյուի և Յ. Չենի ուսումնասիրությունը, ունեն երկարաժամկետ ազդեցություն թե՛ տարածաշրջանային, թե՛ գլոբալ մակարդակում [8]:

Պեկին-2022 և Փարիզ-2024 օլիմպիական խաղերի քաղաքական-տնտեսական վերլուծությունը վառ օրինակ է, թե ինչպես են այս իրադարձությունները նպաստում հյուրընկալող երկրների տնտեսական զարգացմանն ու միջազգային վարկանիշի բարձրացմանը: Տնտեսական տեսանկյունից՝ Պեկինի խաղերը առանձնացան լայնածավալ ենթակառուցվածքների զարգացման և ժամանակավոր շահույթի հնարավորություններով՝ ներառյալ զբոսաշրջության աճ, նոր աշխատատեղերի ստեղծում և հյուրընկալող քաղաքի ենթակառուցվածքների արդիականացում: Պ. Բրաունը, Դ. Քլարքը և Ռ. Ուայթը նշում են [3], որ Պեկինի օլիմպիական խաղերի համար իրականացված ներդրումները (շուրջ 3.9 միլիարդ դոլար) նպաստեցին տարածաշրջանային տնտեսական զարգացմանը, սակայն սահմանափակեցին կայուն եկամուտների ձևավորումը՝ հաշվի առնելով այն փաստը, որ խաղերից հետո որոշ ենթակառուցվածքներ մնացին չօգտագործված:

Փարիզ-2024 օլիմպիական խաղերն իրենց հերթին կենտրոնացած էին կայուն եկամուտների ստեղծման վրա՝ ներդնելով բնապահպանական և երկարաժամկետ տնտեսական լուծումներ: Միջազգային օլիմպիական կոմիտեի զեկույցներում նշվում է, որ Փարիզի խաղերի բյուջեն կազմել է 4.5 միլիարդ դոլար, որի մեծ մասը հատկացվել է վերականգնվող էներգիայի աղբյուրներին, խաղերի անցկացման վայրերի կայունության ապահովմանը և

զբոսաշրջային ոլորտի խթանմանը: Այս մոտեցումը կարևոր է նաև ազգային տնտեսության համար, քանի որ ընդգծված են երկարաժամկետ զարգացմանը նպաստող կայուն տնտեսական մոդելները [6]:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ըստ Ա. Ֆորի [1]՝ Փարիզ-2024-ի խաղերի բյուջեի սահմանափակումների ապացույցները համոզիչ չեն:

Քաղաքական տեսանկյունից՝ Պեկին-2022-ը ցույց տվեց Չինաստանի ջանքերը՝ դառնալու տեխնոլոգիապես առաջատար տերություն և ցույց տալու իր գլոբալ ազդեցությունը: Լ. Շյուի և Յ. Չենի ուսումնասիրությունը վկայում է [8], որ Չինաստանը խաղերն օգտագործեց որպես քաղաքական հարթակ՝ հաստատելու իր հեղինակությունը համաշխարհային սպորտում՝ ընդգծելով տեխնոլոգիական առաջընթացն ու կազմակերպչական հզորությունը: Մյուս կողմից, Փարիզ-2024-ը, ըստ Ջ. Սմիթի և Լ. Թոմասի [7]՝ նպատակ ունի խթանել Ֆրանսիայի՝ որպես կլիմայական փոփոխությունների դեմ պայքարի առաջատարի վարկանիշը, ինչը համահունչ է միջազգային հանրության սպասումներին:

Խաղերի ընթացքում քաղաքական մարտահրավերները նույնպես կարևորվում են: Պեկին-2022-ին բնորոշ էին միջազգային պատժամիջոցների և մարդու իրավունքների խախտումների հարցերի շուրջ առաջացած քննարկումները, որոնք բացասական ազդեցություն ունեցան Չինաստանի միջազգային վարկանիշի վրա [4]: Վառ օրինակներից էր ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի կողմից հայտարարված դիվանագիտական բոյկոտը՝ ի պատասխան Չինաստանում մարդու իրավունքների խնդիրների: Չնայած մարզիկները շարունակում էին մասնակցել խաղերին՝ բոյկոտը ընդգծեց միջազգային քաղաքականության ազդեցությունը սպորտային իրադարձությունների վրա՝ դառնալով դիվանագիտական ճնշման գործիք:

Պեկինի ձմեռային օլիմպիական խաղերի միջազգային իմիջի ճգնաժամը ոչ այնքան տեխնիկական խնդիր էր, որքան քաղաքական և գաղափարական դիմակայություն Չինաստանի և ազատական Արևմուտքի միջև [10]:

Իսկ Փարիզի խաղերի համար մարտահրավեր էր դարձել գլոբալ տնտեսական ճգնաժամը և կլիմայական չեզոքության հասնելու հետ կապված դժվարությունները: Այս քաղաքական համատեքստը, ինչպես նշում է Ռ. Գրաթոնը, ցույց է տալիս, թե ինչպես են Օլիմպիական խաղերը ավելի լայն միջազգային գործընթացների մաս դառնում [4]:

Վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ թե՛ Պեկինը, թե՛ Փարիզը ներկայացնում են նոր մոտեցումներ

Օլիմպիական խաղերի կազմակերպման համար՝ տեխնոլոգիական և բնապահպանական ոլորտներում ունեցած տարբերություններով: Միևնույն ժամանակ նրանց միջև նկատելի են համանման նպատակներ՝ բարձրացնել տեղական ու համաշխարհային տնտեսությունները, ցույց տալ քաղաքական ու տեխնոլոգիական առաջընթացը և ազդել սոցիալական ու բնապահպանական փոփոխությունների վրա: Պեկինի խաղերը լուրջ ներդրումներ արեցին ենթակառուցվածքների զարգացման և նոր տեխնոլոգիաների ոլորտում, մինչդեռ Փարիզը առանձնացավ կայուն զարգացման մոդելով, որն ազդում է ոչ միայն շրջակա միջավայրի, այլև սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործոնների վրա՝ ներկայացնելով նոր ռազմավարություններ միջազգային սպորտային միջոցառումների կազմակերպման ոլորտում: Այս երկու Օլիմպիական խաղերն ապահովեցին բազմաթիվ նոր չափանիշեր, որոնք ունեն երկարաժամկետ ազդեցություն՝ թե՛ տարածաշրջանային և թե՛ գլոբալ մակարդակում [8]:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ Պեկին-2022 և Փարիզ-2024 օլիմպիական խաղերը, որոնք արտահայտում են տարբեր մոտեցումներ՝ տեխնոլոգիական նորարարությունների և կայուն զարգացման ոլորտներում, ստեղծեցին նոր չափանիշեր միջազգային սպորտային իրադարձությունների կազմակերպման համար, ունենալով երկարաժամկետ ազդեցություն ոչ միայն տեղական, այլ նաև համաշխարհային տնտեսական, սոցիալական և քաղաքական դաշտերում: Խաղերը ոչ միայն ներկայացրին առաջադեմ տեխնոլոգիաների և բնապահպանական լուծումների կիրառման օրինակներ, այլև նպաստեցին սոցիալ-տնտեսական կայունության հաստատմանը, ինչն առաջիկայում կարող է ազդել հետագա Օլիմպիական խաղերի կազմակերպման ռազմավարությունների վրա:

2024 թվականի Փարիզի օլիմպիական խաղերի անցկացումը բերում է ինչպես տնտեսական հնարավորություններ, այնպես էլ մարտահրավերներ: Թեև օլիմպիական վայրերի կառուցումն ու շահագործումը խթանում են ներդրումները, աշխատատեղերի ստեղծումը և աճը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են շինարարությունը և զբոսաշրջությունը, երկարաժամկետ տնտեսական օգուտները միշտ չէ, որ բավարարում են սպասելիքները: Օլիմպիական խաղերի հետ կապված ներդրումների և ենթակառուցվածքների կառավարումը՝ կենտրոնանալով կայունության վրա, շատ կարևոր է խաղերից հետո տնտեսական շահույթն առավելագույնի հասցնելու համար: Բացի

այդ, բնակիչների համար զբաղվածության հնարավորությունների ստեղծումը և միջոցառման ժառանգության օգտագործումը՝ երկարաժամկետ տնտեսական զարգացմանը նպաստելու համար, կարևոր նկատառումներ են ընդունող քաղաքների համար [2]:

Եզրակացություն: Այսպիսով՝ հետազոտության արդյունքում ստացված տվյալների շնորհիվ կարող ենք հանգել որոշ եզրակացությունների.

1. Պեկին-2022 ձմեռային օլիմպիական խաղերը և Փարիզ-2024 ամառային օլիմպիական խաղերն առանձնացան և տարբերվեցին մինչ այդ անցկացված խաղերից մի շարք առանձնահատկություններով՝ ներառելով բնապահպանական հարցերի և առաջադեմ տեխնոլոգիաների կարևորությունը:

2. Փարիզ-2024-ը ցույց տվեց, որ խաղերը կարող են տեղի ունենալ անկախ քաղաքական և սոցիալ-տնտեսական բոյկոտների՝ դառնալով պատմության ամենակայուն Օլիմպիական խաղերը:

Առաջարկություն: Ապագա Օլիմպիական խաղերի կազմկոմիտեները պետք է հաշվի առնեն Պեկին-2022-ի և Փարիզ-2024-ի փորձը՝ հիմնվելով արդեն իսկ առկա ենթակառուցվածքների շահագործման, ֆինանսական ծախսերի առավելագույն կրճատման և կայունության զարգացման վրա:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Alexandre Faure. The impact of Paris 2024 on the construction of the Grand Paris Express: a hidden extra cost of the Olympic. 2021. https://hal.science/hal-03253557v1/document [մուտք՝ 27.02.2025]

2. Baptiste L. Economic, Social and Environmental Impact of 2024 Paris Olympic Games Infrastructure Development. Bachelor's thesis. 2023, 73p. https://www.theseus.fi/bitstream/handle/10024/861007/Lefort_Baptiste.pdf?sequence=2&isAllowed=y [մուտք՝ 27.02.2025]

3. Brown, P., Clark, D., & White, R. The Economic Impact of the Olympic Games, New York, 2021. https://www.researchgate.net/publication/ 46528234_ The_economic_ impact_of_the_Olympic_Games_evidence_from_stock_markets [մուտք՝ 27.02.2025]

4. Gratton, R., & Preuss, H. Mega-Events and Their Legacy: The Olympic Games Perspective, London, 2020.

5. Jones, M. Technological Developments in International Sporting Events, London, 2023.

6. Reports by the International Olympic Committee (IOC) Official Report of Beijing 2022, Chapters 3 and 5. Paris 2024 Sustainability Strategy, Chapters 2 and 6.

7. Smith, J., & Thomas, L. Sustainable Olympic Games: From Beijing to Paris, Cambridge, 2022.

8. Xu, L., & Chen, Y. Green Olympics: Transforming China's Environment, Beijing, 2021.

9. Yuan, K.; Hu, B.; Li, X.; Niu, T.; Zhang, L. Exploration of Coupling Effects in the Digital Economy and Eco-Economic System Resilience in Urban Areas: Case Study of the Beijing-Tianjin-Hebei Urban Agglomeration. Sustainability 2023, 15, 7258. https://doi.org/10.3390/ su15097258 https://www.mdpi.com/2071-1050/15/9/7258 [մուտք՝ 27.02.2025]

10.Zhang Q. Privacy and Power around the Beijing 2022 Olympics: Legal and Political Perspectives. Int'l JL Ethics Tech.. 2021:63. https://www.ijlet.org/wp-content/uploads/2025/01/1.1.4.pdf [մուտք՝ 27.02.2025]

FROM BEIJING TO PARIS: THE OLYMPIC EXPERIENCE AND PERSPECTIVES

A.V. Avetisyan, L.K. Khachikyan
Armenian State Institute of Physical Culture
and Sport, Yerevan, Armenia

ABSTRACT

Keywords: Olympic Games, economy, Beijing 2022, Paris 2024, technologies, sustainable development, politics,innovation.

Research relevance: The Olympic Games are a key component of the international sports system, integrating sports, socio-economic, and political factors. The Olympics consistently introduce innovations in technological and social development. The Beijing 2022 and Paris 2024 Olympic Games serve as significant examples of advancements in innovation and sustainable development. These events shape new approaches to addressing global challenges and planning future games.

Research aim and objectives: This study aims to analyze the organization and execution of the Beijing 2022 and Paris 2024 Olympic Games to determine how contemporary technological, socio-economic, and management approaches can

contribute to the long-term sustainable development of the Olympic Games and the effective management of their impacts.

Research objectives are to:

- Examine and compare the organizational approaches of the Beijing 2022 and Paris 2024 Olympic Games.
- Identify lessons that can be applied to more effective planning of future games.

Research methods and organization: The research is based on the study, analysis, and synthesis of literary sources. Political-economic analysis methods of the Games have also been utilized.

Research results analysis: Beijing 2022 served as a testing ground for technologies, integrating artificial intelligence, digital communication, and renewable energy sources. These Games enhanced China's global reputation while facing risks associated with unused infrastructure. Paris 2024 has focused on sustainable development, aiming to achieve climate neutrality. Renewable energy use and environmental innovations are central to the event. Economically, Paris implemented innovative strategies to create long-term revenue streams. Politically, Beijing used the Games to showcase its technological and organizational prowess, while Paris exemplifies leadership in combating climate change. Both Games set new benchmarks in technological and environmental fields.

Conclusion: The Beijing 2022 and Paris 2024 Olympic Games presented distinct yet complementary approaches in advancing technology and sustainable development. These events are crucial for fostering regional and global economic growth, social stability, and addressing environmental challenges. Future organizational processes for the Olympic Games must consider the experiences and lessons of these two events.

ОТ ПЕКИНА ДО ПАРИЖА: ОЛИМПИЙСКИЙ ОПЫТ И ПЕРСПЕКТИВЫ

А.В. Аветисян, Л.К. Хачикян

Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: Олимпийские игры, экономика, Пекин 2022, Париж 2024, технологии, устойчивое развитие, политика,инновация.

Актуальность исследования: Олимпийские игры являются ключевым элементом международной спортивной системы: объединяя спортивные, социально-экономические и политические факторы. Олимпийские игры всегда представляют новшества в технологическом и социальном развитии. Олимпийские игры в Пекине 2022 и Париже 2024 годов являются важным опытом в области инновационного и устойчивого развития. Эти мероприятия формируют новые подходы к реагированию на глобальные вызовы и планированию будущих игр.

Цель исследования: проанализировать опыт организации и проведения Олимпийских игр в Пекине 2022 года и Париже 2024 года и определить, как современные технологические, социально-экономические и управленческие подходы могут способствовать долгосрочному устойчивому развитию Олимпийских игр и более эффективному управлению их воздействием.

Задачи исследования:

- Изучить и сравнить организационные подходы Олимпийских игр в Пекине 2022 года и Париже 2024 года.
- Извлечь уроки, которые можно использовать для более эффективной организации будущих игр.

Методы исследования: Исследование основано на изучении, анализе и обобщении литературных источников. Также использовались методы политико-экономического анализа игр.

Анализ результатов исследования: Олимпийские игры в Пекине 2022 года стали испытательной площадкой для технологий, включая искусственный интеллект, цифровые коммуникации и возобновляемые источники энергии. Эти игры способствовали укреплению глобального авторитета Китая, одновременно столкнувшись с рисками неиспользуемой инфраструктуры. Париж 2024 года сосредоточен на устойчивом развитии с целью достижения климатической нейтральности. Использование возобновляемой энергии и экологические инновации стали центральными элементами игр. В экономическом плане Париж внедрил инновационные подходы, направленные на создание долгосрочных доходов. С политической точки зрения Пекин использовал игры для демонстрации своих технологических и организационных возможностей, а Париж стал примером лидера в борьбе с изменением климата. Эти игры установили новые стандарты в области технологий и экологии.

Краткие выводы: Олимпийские игры в Пекине 2022 года и Париже 2024 года представили разные, но взаимодополняющие подходы к продвижению передовых технологий и устойчивого развития. Эти мероприятия играют важную роль в экономическом росте, социальной стабильности и решении экологических проблем на региональном и глобальном уровнях. В процессе организации будущих Олимпийских игр необходимо учитывать опыт и уроки этих двух мероприятий.

Տեղեկություններ հեղինակների մասին

Արման Վաչագանի Ավետիսյան՝ մ.գ.թ, Սպորտի կառավարման և մարզական լրագրության ամբիոնի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: arman. avetisyan@sportedu.am, ORCID: 0000-0002-0303-3612

Լիլիաննա Կարապետի Խաչիկյան՝ Սպորտի կառավարման և մարզական լրագրության ամբիոնի մագիստրանտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: lilianna.khachikyan.2020@sportedu.am

Information about the authors

Arman Vachagan Avetisyan, PhD, Lecturer at the Chair of Sports Management and Sports Journalism, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia,

E.mail: arman.avetisyan@sportedu.am, ORCID: 0000-0002-0303-3612

Lilianna Karapet Khachikyan, Master's degree student at the Chair of Sports Management and Sports Journalism, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E.mail: lilianna.khachikyan.2020@sportedu.am, ORCID: 0009-0008-6320-121X

Հոդվածն ընդունվել է 23.02.2025–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 24.02.2025–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Չատինյան